ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

20 փետրվարի 2026 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Գրիգոր Սարգսյանը, Եղիշե Նազարյանը, Ծովինար Սարգսյանը, Մուշեղ Ներսիսյանը, Սամվել Ոսկանյանը, Սոնա Մարգարյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը և Տիգրան Նազարյանը:

Նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Սամվել Օրդոյանը և համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Քրիստինե Պողոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 9 նստաշրջանի առաջին՝ 2026 թվականի փետրվարի 20-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 20-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը հաստատելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 156-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 16-ի N 77-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 163-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7) Հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

9) Հողամասերը համայնքի հաշվեկշռին ամրացնելու մասին:

10) 0.01 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

11) 2.54 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու և հողամասի կադաստրային արժեքի վճարումը տարաժամկետելու մասին:

12) Համայնքային սեփականություն հանդիսացող 0.0246 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

13) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության թույլատրելի և արգելված վայրերը սահմանելու մասին:

14) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջներն ու պայմանները սահմանելու մասին:

15) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին:

16) Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

17) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքը վարձակալության տրամադրելու մասին:

18) Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեում վերաբաշխումներ կատարելու մասին:

19) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

20) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 144-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

21) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 04-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 83-Լ որոշմամբ հաստատված համայնքային սոցիալական ծրագիրը (X գլուխ, 3-րդ պարբերություն) և ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին որոշեց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 05-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 06-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի՝ «2026 թվականի համար Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 156-Ա որոշմամբ հաստատված հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 07-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 16-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքը փոխանակությամբ օտարելու համար համաձայնություն տալու մասին» N 77-Ա որոշման հիմնական մասի 1-ին կետում «2077304» թվերը փոխարինել «21072025-10-0011» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 08-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 163-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի «Եղեգնաձոր համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն սկսելու մասին» N 163-Ա որոշման հիմնական մասի՝

1) 1-ին կետում «16 000 000 (տասնվեց միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «45 000 000 (քառասունհինգ միլիոն)» թվով և բառերով,

2) 2-րդ կետում «8 000 000 (ութ միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «15 000 000 (տասնհինգ միլիոն)» թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ

Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 09-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.1035 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0827, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 29012026-10-0002) և 0.2471 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0826, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 23012026-10-0013) այլ հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 10-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 38-րդ կետը, քննարկելով «Կենդանիների պաշտպանության «Ռոկի»» ՀԿ-ի նախագահի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.1035 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0827) և 0.2471 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0826) գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերը, 10 (տասը) տարի ժամկետով, անհատույց օգտագործման տրամադրել «Կենդանիների պաշտպանության «Ռոկի»» ՀԿ-ին՝ ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 11-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով թիվ ՀԿԴ/0137/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի փետրվարի 12-ի վճիռը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի թիվ ՀԿԴ/0137/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով կայացված վճիռներով Եղեգնաձոր համայնքին վերադարձված հողամասերը՝ համաձայն հավելվածի, ամրացնել համայնքի հաշվեկշռին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 12-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

0.01 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի

մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 30-ի N 1/փ-21 դրական եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Վ. Զորավարի փողոց 36/1 հասցեում գտնվող, քաղաքացի Արթուր Տելեսիկի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.01 հա արդյունաբերական օբյեկտների հողի (անշարժ գույքի նկատմամաբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 29102019-10-0004, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0135-0048) նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 13-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

2.54 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՏԱՐԱԺԱՄԿԵՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 29-ի N 2/փ-448 դրական եզրակացությունը, քննարկելով «Լեգրանդ» ՍՊԸ-ից ստացված դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Ագարակաձորի խճուղի 2/1/1 հասցեում գտնվող, «Լեգրանդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 2.54 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողի (անշարժ գույքի նկատմամաբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 06112024-10-0021, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0174-0037) նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, բնակելի շենքեր կառուցելու նպատակով:

2. Կարևորելով այն հանգամանքը, որ «Լեգրանդ» ՍՊԸ-ի կողմից Եղեգնաձոր քաղաքի Ագարակաձորի խճուղի 2/1/1 հասցեում նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցումը կնպաստի համայնքի կայուն զարգացմանը (կկատարվեն ներդրումներ, կիրականացվեն մեծածավալ աշխատանքներ, կստեղծվեն նոր աշխատատեղեր), սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխության արդյունքում առաջացող կադաստրային արժեքի (47 693 580 (քառասունյոթ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ) ամբողջական վճարումը տարաժամկետել՝ համաձայն ստորև բերված ժամանակացույցի՝

1) 1-ին վճարում - 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ՝ 2026 թվականի փետրվարի 24-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում,

2) 2-րդ վճարում - 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ՝ 2026 թվականի ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում,

3) 3-րդ վճարում - 19 693 580 (տասնինը միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ 2026 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակատվածում:

3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված վճարման կատարումը հավաստող անդորրագիրը հիմք է հանդիսանում հողամասի նպատակային նշանակության փոփոխության պետական գրանցման համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 14-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0246 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Մանվել Խալաթյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Ա. Միկոյան փողոց, 22/15 պահեստ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.0246 հա մակերեսով պահեստով (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0058-0083-001) ծանրաբեռնված պահեստարանների հողն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Մանվել Արտուշի Խալաթյանին:

2. Վաճառքի գին սահմանել 1 092 690 (մեկ միլիոն իննսուներու հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամ (կադաստրային արժեքի 100 տոկոսը):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 15-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԵՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՎԱՅՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24.4-րդ հոդվածի 3-րդ և 10-րդ մասերով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկությունը թույլատրվում է միայն Եղեգնաձոր համայնքի զբոսայգիների ճեմուղիներում, բացառությամբ 16 տարին լրացած և «ԱՄ» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց:

2. Սահմանել Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության հետևյալ արգելված վայրերը՝

1) Եղեգնաձոր համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհներ.

2) Եղեգնաձոր քաղաքի Նարեկացի 8 հասցեում գտնվող հրապարակ.

3) Համայնքի (Եղեգնաձոր, Մալիշկա, Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրեր) մանկական խաղահրապարակներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 16-Ն)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու կամ մատուցելու թույլտվություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց առաջարկել՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում, քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերը և շինությունները համապատասխանեցնել սույն որոշման հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջներին ու պայմաններին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 17-Ն)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.7–րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ **ավագանին որոշեց**.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 18-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մշակույթի տան շենքը անհատույց օգտագործման տրամադրել «Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին ուսումնադաստիարակչական գործընթացը բնականոն կերպով իրականացնելու նպատակով, մինչև նշված դպրոցի հիմնական շենքի վերանորոգման աշխատանքների ավարտը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ժամանակահատվածում Գլաձորի մշակույթի տան շենքում պետք է պահպանվեն գործող տարբեր խմբակների աշխատանքները:

3. Կոմունալ բոլոր ծախսերը թողնել «Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վրա, իսկ ուսումնական գործընթացի ավարտից հետո օգտագործված տարածքները պետք է բերվեն պատշաճ տեսքի, անհրաժեշտության դեպքում՝ իրականացվեն ընթացիկ նորոգման աշխատանքներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 19-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, քննարկելով քաղաքացի Սուրեն Մարտիրոսյանի դիմումը, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-628 հոդվածների՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի ավտոպարկի երկրորդ հարկը վարձակալական հիմունքներով, 6 (վեց) ամիս ժամկետով, տրամադրել քաղաքացի Սուրեն Մարտիրոսյանին:

2. Վարձավճար սահմանել ամսական 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Սուրեն Մարտիրոսյանի հետ կնքել տարածքի վարձակալության պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 20-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 7-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

Պակասեցնել՝ գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ և այն ավելացնել՝ գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 02 դաս 04 (ոռոգում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր)

հոդվածին՝ Եղեգնաձոր և Մալիշկա բնակավայրերի ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 21-Ն)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով անկախ գնահատող կազմակերպության կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասով հաշվարկված շուկայական արժեքները՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ

Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 22-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 144-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի՝ «Եղեգնաձոր համայնքի կողմից 2026 թվականին ներկայացվող սուբվենցիոն ծրագրային հայտին համաձայնություն տալու մասին» N 144-Ա որոշման՝

1) վերնագրում «հայտին» բառը փոխարինել «հայտերին» բառով.

2) հիմնական մասի՝

ա. 1-ին կետը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ՝

«1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի կողմից 2026 թվականին ներկայացվող, համայնքի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն հետևյալ ծրագրերին՝

1) «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան փողոցի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ».

2) «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Շահումյան և Բաղրամյան փողոցների բարեկարգում և ասֆալտապատում».

3) «Եղեգնաձոր համայնքի Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցերի կառուցում»:»,

բ. 2-րդ կետում «հայտի փաթեթը» բառերը փոխարինել «հայտերի փաթեթները» բառերով,

գ. 3-րդ կետում «ծրագրի» բառը փոխարինել «ծրագրերի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 23-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2026 թվականի մարտի 20-ը, ժամը՝ 18:30, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ծ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 24-Ա)*

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____